

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Ս դարից սկսած, հայ մատենագիրների մի շուրջը ռանակ — պատմիչներ, փիլիսոփաներ, բնականագետներ, տաղերգուներ, թարգմանիչներ, տիեզերագետներ, բժիշկներ, մաթեմատիկոսներ, — ստեղծեց հայ բազմահարուստ մատենագրությունը, որի առավել բախտավոր նմուշները, փրկվելով ժամանակի ավերիչ ձեռքերից հասել են մեզ և ամփոփված են աշխարհի տարբեր մատենադարաններում պահվող մոտ 25 հազար հայկական ձեռագրերում: 1512 թ., երբ աշխարհի ընդամենը տասնմեկ երկրներ (Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Սպանիա, Անգլիա, Դանիա, Շվեյցարիա, Պորթուգալիա, Ավստրիա, Ռումինիա) ունեին տպարաններ՝ լույս տեսավ հայերեն առաջին տպագիր գիրքը, որով և հիմք դրվեց հայկական տպագրությանը:

Այսպիսով ժԸ դարում հայ ժողովուրդն արդեն կուտակել էր 1300 տարվա ձեռագիր և 300 տարվա տպագիր գրականության պաշար: Այդպիսի մի բազմադարյան գրականության մատենագիտություն կազմելը պետք է առաջադրեր իր ծավալուն պահանջները, որոնց բավարարելու համար «Հայկական մատենագիտության» (շուրջ տասը հատոր կազմող աշխատության) հեղինակ, հայագիտական մի շարք գրքեր հրատարակած րախասեր Հ. Ս. Անասյանը տրամադրել և տրամադրում է վիթխարի աշխատանք և բազմակողմանի հմտություն:

«Հայկական մատենագիտության» առարկան ևն հանդիսացել բացի Ե—ԺԸ դարերի ընթացքում հորինված և այլ լեզուներից թարգմանված մատենագրական երկերից նաև ԺԸ դարից հետո մինչև մեր օրերը լույս տեսած այն բոլոր հայագիտական ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հայկական միջնադարյան մատենագրությանը:

Նյութի ներկայացման հմուտ եղանակը հնարավորություն է ստեղծել «Հայկական մատենագիտության» մեջ ընդգրկելու հայ հին և միջնադարյան գրականությունն իր ամբողջությամբ՝ կրկու իրարից անբաժան մասերով — ինքնուրույն և թարգմանական: «Մեր հին գրականությունը, ինչպես և ամեն կուլտուրական երևույթ, սպիտակ, մեկուսի և անջատ չէ նաև այլ ազգերի

ժամանակակից կուլտուրայից ու մասնավորապես գրականությունից: Գրավոր դպրությունը նույնիսկ ծագել է ասորիների ու հույների հետ ունեցած հաղորդակցության հետևանքով... Ուստի այս աշխատության մեջ ոչ միայն բավական տեղ է տրված թարգմանություններին, այլև գրականության պատմությունն ամենաախնայական դարերից, առասպելներից սկսած, առնված է այլ գրականությունների հետ համեմատությամբ»: Մանուկ Աբեղյանի՝ «Հայոց հին գրականության պատմության» համար գրված այս տողերը լիովին համապատասխանում են Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությանը»: Աճառյանը նույնպես հայ հին մատենագրությունը դիտում էր միայն ինքնուրույն և թարգմանական ստեղծագործությունների ամբողջության մեջ: «Անձնանունների բառարանս կազմելու համար, — գրում է նա, — օգտագործել եմ ամբողջ մեր հին մատենագրությունը, ինքնուրույն և թարգմանական»: Հայոց լեզվի բոլոր գիտական բառարանների առաջը կազմում է միաժամանակ հայ ինքնուրույն և թարգմանական մատենագրությունը: Այսպիսով, Հ. Անասյանը թարգմանական գրականությանը դիմելիս առաջնորդվել է հայ գրականության գիտական պատմության լավագույն տրադիցիաներով:

«Հայկական մատենագիտության» համար նյութեր հավաքելիս Անասյանը շի անտեսել նաև կրոնական բովանդակություն ունեցող երկերը, որոնք իրենց մեջ պահպանել են հայ միջնադարյան գրականության արժանահիշատակ տարբեր: «Գեղեցիկ գրականությանը երկրորդաբար պատկանում են պերճախոսությունը, ճառերը, որոնք բոլորը կրոնական բովանդակություն ունեն: Դրանց մեջ կան այնպիսիները, որ հորինված են հոստորական վսեմ արվեստով», — գրել

1 Ակադ. Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա (սկզբից մինչև 10-րդ դար), Երևան, 1944, էջ 4:

2 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 11:

3 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, էջ 3:

է Արեղյանը: Վկայարանությունները «դրանք հին դրականության վիպական պատումներն են իրենց առանձնահատուկ ձևով ու նպատակով»⁴: Կրոնական բովանդակություն ունեցող գրքերից են նաև անվավեր գրքերը, որոնք հարուստ նյութ են մատակարարել հայկական միջնադարյան քանդակարվեստին, մանրանկարչությանն ու արվեստի մյուս ճյուղերին: Կրոնական գրականության մեջ հաճախ հանդիպում են այնպիսի կարևոր տվյալներ հայ ժողովրդի պատմական կյանքի գանազան մանրամասնությունների մասին, որոնք բացակայում են պատմիչների երկերում, Աղոթական գրականության կապակցությամբ Անասյանը գրում է. «Բացի այն, որ աղոթքները հաճախ լեզվական, գրական ու բանասիրական արժեք են ներկայացնում,— ինչպես Գրիգոր Նարեկացու, Ներսես Շիրակացու և այլոց աղոթքները,— երբեմն նրանք օժանդակ նյութեր են հանդիսանում այս կամ այն ժամանակաշրջանի հասարակական մտայնությունների և քաղաքական իրադրության ուսումնասիրության համար... Սիմեոն Նրեկացին ունի աղոթքներ, որոնք ... քաղաքական խոշոր նշանակություն ունեն: «Աղօթք ողբերգական վասն հասարակ ազգիս...»-ը մի գեղարվեստական սրտառու ուղերձ է, որի մեջ հեղինակը ռեալիստական վրձինով պատկերում է իր ժողովրդի անմխիթար վիճակը»⁵:

Բովանդակության հարստությամբ և նյութերի ներկայացման սկզբունքով «Հայկական մատենագիտությունը» ոչ միայն բավարարում է ժամանակակից մատենագիտության պահանջները, այլև իր հետ բերում է բազմաթիվ նորարարություններ: Մենք առիթ ենք ունեցել ծանոթանալու միջազգային մատենագիտության՝ ժամանակով ամենավերջին երկի՝ դեռ նյութերի հավաքման ընթացքի մեջ գտնվող բազմահատոր «Նոր Պոտհաստ»-ի (Bibliotheca historiae medii aevi, որի աշխատանքներին մասնակցում են նաև սովետական գիտական հիմնարկները, այդ թվում և՛ Հայաստանը) հրատարակությունը նախապատրաստող՝ Հոմի միջազգային կոմիտեի մշակած օրագրի հետ, և հագուտ «Հայկական մատենագիտության» կարելի է ասել, որ այն իր առաջադրած պահանջների մեջ անհամեմատ ավելի բազմակողմանի է: Այդտեղից կարելի է քաղել Նոր Պոտհաստի համար պահանջվող այն բոլոր տվյալները, որոնք վերաբերում են հայ աղբյուրագիտությանը և նրա միջոցով՝ ընդհանուր պատմությանը:

Առաջին անգամ հայ մատենագիտության մեջ հավաքված են ոչ միայն տպագիր, այլև ձեռագիր

նյութեր: Այս նշանակում է, որ «Հայկական մատենագիտության» միջոցով գիտական հասարակայնությանը ներկայացվում են Ե—ԺԲ դարերի ընթացքում ստեղծված բազմաթիվ երկեր, որոնք գտնվելով ձեռագրերում, հայտնի են եղել միայն ձեռագրերի հետ կապված մասնագետների շատ նեղ շրջանի, երբեմն էլ՝ առհասարակ հայտնի չեն եղել:

Նյութերի հավաքման և ներկայացման աշխատանքները, որքան մենք նկատում ենք, ընթացել են հիպո ուղղությամբ՝ ա. հավաքել և նշել հայկական մատենագրության բոլոր գործերը անխտիր և Կ. նյութերը ներկայացնելիս՝ խորություն ցուցարներել առավել արժեքավորների նկատմամբ: Վերջինս ինքնուստինքյան հասկանալի է, իսկ առաջինը պայմանավորված է նրանով, որ «Հայկական մատենագիտությունը» որոշ առումով հանդիսանում է միաժամանակ հայ գրավոր մշակույթի բոլոր հուշարձանների հաշվառումը, նրանց, մի տեսակ, գույրագրումը:

Ներկա հատորում հանդիպում են նույնիսկ այնպիսի անուններ, որոնց կապակցությամբ բովանդակ հայ մատենագրության մեջ ընդամենը մեկ կամ մի քանի տող հիշատակություն է մտնում և որոնց մասին լուրջ անհանդուրժելի կիսներս Այսպես, օրինակ, էջ 888-ում առանձին վերնագրի տակ տեղ է հատկացված նախքան մեր թվ. Ա դարում ապրած արիստոսելյան իսաստասեր Անդրոնիկոս Հոռոզացուն: Սրա մասին տեղեկություն է պահպանվել Գրիգոր Մագիստրոսի թղթերում, որտեղ ընդամենը մեկ նախադասությամբ հայտնվում է, թե օգտնել եմ զՆախմարոսի և զԱնդրոնիկեայն ի հայ լեզու: Եթե այս տեղեկությունը պահպանված չլիներ հայագիտությանը հայտնի չէին դառնա ժամանակի հույն մատենագիրներից երկուսի երկերի հայերեն թարգմանությունը: Գրիգոր Մագիստրոսի տեղեկությունը այս տեսակետից նույնքան արժեքավոր է, որքան, ասենք, Հովհաննես Գրասխանակերտցու վկայությունը Շապուհ Բագրատունու Պատմության մասին, որը, ինչպես Անդրոնիկոսի երկի հայերեն թարգմանությունը, մեզ չի հասել: Եթե հայ մատենագրության պատմության մեջ նշվում է Շապուհ Բագրատունու անունը՝ հասկանալի է, որ թարգմանական մատենագրության կապակցությամբ էլ պետք է նշվի Անդրոնիկոսը: Այսպիսով, «Հայկական մատենագիտության» քարտեզում նշված են հայ մատենագրության ոչ միայն կանգուն հուշարձանները, այլև այնպիսիները, որոնք ծածկված են հողի տակ և հայտնի են դառնում պեղումների միջոցով:

Հ. Անասյանը աշխատանքի ընթացքում հայտնարներել է մինչև այժմ մասնագետներին անհայտ մի շարք մատենագրական երկեր (տպագ-

⁴ Նույն տեղում:

⁵ Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, էջ 626—627:

դիր և ձեռագիր), որոնք առաջին անգամ են մտնում մատենագիտության պատմության մեջ: Տպագիրներից հիշենք 1. «Իրք տոմարաց Հայոց, Ազարիայի և Հոռմայեցոց», տպագրված Վիննակում 1685 թ., որը կազմված լինելով Սյուրանի Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկի պրակների հետ միասին՝ գտնվում է ձեռագրաց ֆոնդում, 2. 1673 թ. Հոռմում տպագրված մի հայերեն այբբենարան, որի միակ օրինակը գտնվում է Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան Պետ. գրադարանում, 3. Մեկ ուրիշ այբբենարան՝ տպագրված Հոռմում 1784 թ., և ուրիշ գրքեր:

Առավել արժեքավոր են նորահայտ ձեռագրական նյութերը: Նրանցից մեկը դարձյալ վերաբերում է Ազարիա Ջուղայեցուն (տե՛ս «Ազարիա Ջուղայեցի տոմարագետ [1]», էջ 273—276): 2. Անասյանը Մատենադարանում հայտնաբերել է այս հեղինակի ինքնագիր հիշատակարաններն ու տոմարագիտական աշխատությունները, որոնք նոր լույս են սփռում հեղինակի կյանքի և գրական ժառանգության վրա: Այս նյութերից պարզվում է, որ Ջուղայեցին ապրել է ոչ թե փ՛ է դարի առաջին կեսում, ինչպես կարծվում էր, այլ փ՛Ձ դարի կեսերին: Անասյանի հայտնաբերած ձեռագրական նյութերից են նաև Անանիա Շիրակացու գրչին պատկանող երկու տոմարագիտական երկեր՝ 1. Անանիայ Շիրակայ(յ)նոյ համարողի յաղագս Թ և Ժ երկաց լուսնի» և 2. («Լուսանցոյց) զՋմուտ (լուսն)ացոցիս Թ և Ժ ամաց շրջանիս այսպէս արա...» (տես «Հայկական մատենագիտություն», էջ 743):

Անասյանը նշում է (էջ 9, 15) ներսես Շնորհալուն ժամանակակից մի հեղինակի՝ Նիսի Ասորուն, որն ասորական գրականության մեջ հայտնի չլի՞ն և ընդհանուր գիտությանը ներկայանում է ներկա «Հայկական մատենագիտություն» միջոցով միայն:

Մեր ասածներից երևում է, որ 2. Անասյանի կազմած «Հայկական մատենագիտությունը», իր նախորդների համեմատությամբ (Գ. Զարրհանայան, Ա. Ղազարյան և ուրիշներ), իրենից ներկայացնում է մի բարձրորակ գիտական աշխատություն, որտեղ հեղինակը ոչ միայն գրանցում է Ե—Փ՛Ղ դարերի մատենագրական հուշարձանները, այլև, ինչպես ճիշտ կերպով նշված է «Հայկական մատենագիտության» Ա հատորի սկզբում զետեղված՝ Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գնա-

հատականում, «դրանք գիտականորեն բնութագրում ու արժեքավորում է, տալիս է դրանց բանասիրական ամփոփ վերլուծությունները՝ աղբյուրագիտական և քննադատական տեսանկյունից... Բանասերներին քննաքար դիրքորոշում է հայագիտության կարևոր հարցերի նկատմամբ, և, որ գլխավորն է, դյուրացնում է ապագա հետազոտություններն ու լուսարանությունները: 2. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտությունը» կարելի է բնութագրել որպես աղբյուրագիտական և քննադատական մատենագիտություն»:

Հանդես գալով որպես բանասեր, պատմաբան, աղբյուրագետ, 2. Անասյանը նյութերը բանասերների ուշադրությանն է հանձնում մանրազնին հետազոտությունից և գիտական մշակումից հետո, որոշում է քննադական վարիանտներ և խմբագրություններ, արտահայտում է իր կարծիքը երկրայելի ինքնություն ունեցող երկերի մասին, կատարում է բանասիրական կարևոր ճշտումներ, իր քննական կարծիքն է հայտնում այս կամ այն քննադատ հրատարակության թերությունների կամ առավելությունների մասին, բնութագրում է զանազան մատենագրական տեսակներ (ախտարական գրականություն, առակագրություն, անկանոն կամ անվավեր գրքեր և այլն), հանգում է մատենագիտության սահմաններից դուրս եկող գիտական եզրակացությունների և այլն:

Հատորում գտնվող որոշ հոդվածներ կարող են տպագրվել որպես առանձին գիտական ուսումնասիրություններ: Դրանցից էլ, օրինակ, աղվանից գրքերին վերաբերող հոդվածը, որտեղ արտահայտված կարծիքն իր սրամիտ տրամաբանությամբ մեզ ավելի է համոզում, քան հարգելի ակադ. Ա. Գ. Շանիձեի տեսակետը: Անասյանը մատնանշում է մեր Մատենադարանի № 3124 (էջ 11բ) ձեռագրում պահպանված աղվանից այբուբենը (որի մասին ժամանակին խոսել են է. Բորեն և Ն. Փարամյանցը և որը վերջերս Ա. Գ. Շանիձեի կողմից դիտվեց որպես ոչ աղվանական գրեր, այլ՝ հայկական ծածկագրեր) և այդ առթիվ գրում է. «Այդ կասկածը, որ Շանիձեից առաջ հայտնել են և ուրիշներ, հենվում է լուկ այն իրողության վրա, որ Բորենի և Փարամյանցի մատնանշած աղվանական այբուբենի տառերն ունեն հայկական տառերի թիվը, դասավորումն ու նրանց հետ նմանություններ... հենց այն զգալի նմանությունը, որ գոյություն ունի աղվանական խնդրո առարկա տառերի և հայկականների միջև և որի վրա ուշադրություն է հրավերում Շանիձեն, խոսում է միայն ճշգրտ այն բանի, որ այդ այբուբենը շէր կարող լինել հայկական ծածկագրություն, քանի որ ծածկագրության սկզբունքն էլ կայանում է նմանու-

⁶ Հմմտ. W. Wright, A short history of Syriac Literature, London, 1894. նույնը ռուսերեն՝ В. Райт, Краткий очерк истории сирийской литературы, С. П.-Бург, 1902.

բյուրեններից խուսափելու մեջ» (էջ 616: Հնդգծումը մերն է — Ե. Ա.): Անասյանի այս կարծիքը՝ ազվանից գրեթե մասին՝ ընդունելություն է գտել սովետական պատմագիտության կողմից և ներկայացված է մասնագետներին⁷:

«Հայկական մատենագիտության» լույս տեսնելուց հետո, ակադ. Շանիճեն իր մի հոդվածում գրում է. «Հ. Անասյանը գտնում է, որ հայկական ձեռագրերում հանդիպող և «Ազվանից գրեր» կոչվող այբուբենները հանդիսանում են Ազվանից հին տառերի ձևափոխումներ, որոնք հայացած ազվանների կողմից հարմարեցվել են նոր կարիքների համար, այն է՝ իրենց տառերով գրել հայերեն բառեր և բնագրեր⁸, ասպ՝ հավանություն տալով այս կարծիքին՝ ավելացնում է. «Լիովին հնարավոր է, որ դարերի ընթացքում ազվանական տառերը կրել են այնպիսի փոփոխություններ, որ այլևս նման չեն իրենց նախատիպերին, ինչպես այդ տեղի է ունեցել վրացական գրերի զարգացման պատմության մեջ»⁹:

«Հայկական մատենագիտության» Ա հատորին ուղեկցում են 1. «Ներածություն», 2. «Մատենագիտական բնագրեր», 3. «Ձեռագրացուցակներ», 4. «Հավելված», 5. «Ցանկ բնագրերի սկզբնատղերի» բաժինները:

Ներածության մեջ առաջին ասպաս շարադրված է հայ մատենագիտության պատմությունը: Այստեղից իմանում ենք, որ հայկական մատենագիտությունը ծագել է համարյա թե հայ գրականության հետ զուգընթաց: Այն իր ծագմանն է հասել մասնավորապես ժԳ դարում, երբ ստեղծվել է հայ մատենագիտության գլուխ-գործը՝ Գրիգոր Արասյանի «Գիրք պատճառաց»-ը, որի հնագույն օրինակը պահվում է Մատենադարանում (ձեռ. № 1879): «Գիրք պատճառաց»-ում ընդգրկված են մինչև ժԳ դարը գոյություն ունեցած 164 գրքեր, որոնց նվիրված նկարագրական հոդվածների թիվը հասնում է 196-ի: Այստեղ ոչ միայն ներկայացվում, այլև գրախոսվում են գրքերը և տեղեկություններ տրվում նրանց հորինման պատճառների և հեղինակների կյանքի մասին և այլն: «Գրիգոր Արասյանի կազմած «Գիրք պատճառաց»-ը, —

գրում է Հ. Անասյանը, — խոշոր երևույթ է հայ մատենագիտության պատմության մեջ... Մատենագիտական աշխատանքի միջնադարյան այս հսկան, ժԲ դարի վերջերում և ժԳ-ի սկզբներում առաջ էր եկել Մեծ Հայքի և Կիլիկյան Հայաստանի մտավորականության հավաքական աշխատանքով, մեր արևելյան և արևմտյան մշակույթների շփմամբ», «Գիրք պատճառաց»-ը կազմված է հատուկ ծրագրով, այն է՝ «ուսումնասիրել գրքի պատմությունը»¹⁰: Անասյանը որոշում է «Գիրք պատճառաց»-ում տեղ գտած տարրեր հոդվածների հեղինակներին (Դավիթ Քորայրցի, Սղիա Ասորի, Վարդան Հաղբատացի և այլք):

«Մատենագիտական բնագրեր» բաժնում հեղինակը հավաքել է ձեռագրերում և տպագիր աղբյուրներում գտնվող բոլոր այն բնագրերը (թվով 25), որոնք փաստորեն հայ միջնադարյան մատենագիտության առաջին ստեղծագործություններն են: Թե որքան արժեքավոր են նրանք՝ երևում է նրանից, որ այնտեղ հաճախ հանդիպում են որոշակի տեղեկություններ այնպիսի գործերի մասին, որոնց ինքնությունը որոշելու համար բանասիրությունը երկարատև որոնումներ է կատարել: Այսպես, օրինակ, այդ ցուցակներում Հովհաննես Պլուզը և Հովհաննես Մործորեցին երկու տարրեր հեղինակներ են: «Պատմություն վասն ազգին նետողաց» երկի հեղինակը ոչ թե Մաղարիա Արևզան կամ Վարդան Սրբեկցին է, որոնց անուններով հրատարակվել է այդ գիրքը, այլ՝ Գրիգորը (Ակնեբրցին կամ Ակնեցին), Անանիա Շիրակացու ղեկավարությամբ, որը բանասիրությունը միայն հետազայում պարզել է, որ Անանիա Շիրակացուն է և այլն:

«Ձեռագրացուցակներ» խորագրի տակ հրատարակված են աշխարհում ցրված հազարավոր հայկական ձեռագրերի բովանդակությունը ներկայացնող 178 տպագիր և անտիպ ցուցակներ, որոնք կօգնեն հայագետներին ձեռագրական նյութերը որոնելու իրենց աշխատանքում:

Առանձնապես արժեքավոր է բնագրերի սկզբընստղերի ցուցակը: Այստեղ հավաքված են հատուրում նշված բոլոր տպագիր և անտիպ բնագրերի սկզբնատղերը, որոնց գիտական արժեքը հանրահայտ է և որոնք մեծապես կօժանդակեն բնագրագիտությամբ զբաղվող բանասերների աշխատանքներին:

«Հայկական մատենագիտության» ներածականը եզրափակվում է հեղինակի հետևյալ ցանկությամբ. «Ցանկալի է, որ մասնագետներն իրենց

⁷ Տե՛ս «Очерки истории СССР»: Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР, III—IX в.в.; Издательство АН СССР, Москва, 1958, стр. 328—329.

⁸ А. Г. Шанидзе, Криптографическая запись в одной армянской рукописи из Мюнхенской коллекции. — Известия АН АрмССР, 1960, № 9, стр. 91—98.

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Հայկական մատենագիտություն», էջ XIV—XV:

կարծիքներն ու դիտողությունները հայտնեն ներկա հատորի մասին և պիտանի թելադրանքներ անեն մեր հետագա աշխատանքների համար, որպեսզի հաջորդ հատորները զերծ լինեն այն թերություններից, որոնք երևում են այս հատորում...»:

Հեղինակի ցանկությունը բավարարենք մի երկու դիտողությունով:

Հայտնի է, որ հայ մատենագրության հուշարձանների նշանակությունը տարածվում է նաև հայագիտության սահմաններից դուրս, հետևաբար՝ «Հայկական մատենագիտություն»-ից օգտուվելու կարիքը կզգան ոչ միայն հայերենագետները, Այս տեսակետից խիստ անհրաժեշտ է, որ նյութերը, գոնե ընտրովի, ներկայացվեն նաև ուսուցիչներին ամփոփապրելով: Սրանով «Հայկական մատենագիտություն» կիրառության սահմաններն անհամեմատ ավելի կմեծանային:

Այնուհետև, մեզ թվում է, «Հայկական մատենագիտություն» նման մի բարձրորակ մասնագիտական աշխատության հետ անհամատեղելի է անվանացանկի բացակայությունը: Ցանկալի է՝ յուրաքանչյուր հատորի վերջում ունենալ հատորի մեջ ընդգրկված պատմական և բանասիրական նշանակություն ունեցող հատուկ անունների ցանկ: Ա հատորի այս բացը կարելի կլինի վերացնել՝ նրա հատուկ անունների ցանկը թ հատորի ցանկի հետ միասին տալով:

«Հայկական մատենագիտություն»-ը այն կարգի գրքերից է, որոնք հրատարակվում են մեկ անգամ՝ երկար ժամանակների համար և ենթակա են ամենօրյա օգտագործման: Այս հանգամանքը թելադրում է՝ գոնե հետագա հատորները տպագրել ավելի որակյալ թղթի վրա, լավ կազմված ու ավելի խնամքով: Դրանով կերկարացվի գրքի կյանքը:

Պետք է հոգալ նաև այն մասին, որ հաջորդ հատորներում ավելի լավ ընտրված և ավելի շատ զետեղված լինեն հնատիպ գրքերի կամ ձեռագրական միավորների լուսանկարներ, որի անհրաժեշտությունը որոշ դեպքերում նույնքան զգալի է, որքան գրքերին վերաբերող մյուս տեղեկությունները: Ցանկալի կլինեն յուրաքանչյուր հատորում ունենալ մի քանի գունավոր նկարներ ընտրելով նմուշներ մեր միջնադարյան արվեստի այն գույն-գործոցներից, որոնք կապվում են հայ մատենագրության հետ:

Մի քանի այլ դիտողություններ:

Անանիա Շիրակացու երկերին հատկացված բաժնում չի նշանակված 1943 թ. նրա անունով հրատարակված «Աշխարհացույցը»¹¹ և հղում է արված (էջ 733) դեպի Մովսես Խորենացուն

նվիրված հոդվածը: Ըստ երևույթին Անասյանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Աշխարհացույցի» շուրջ ստեղծված բանասիրական գրականությունն ամբողջությամբ կապված է Խորենացու հետ, անհրաժեշտ է համարել այդ հարցը պայմանականորեն թողնել՝ կապված Խորենացու հարցի հետ, քանի որ նա ինքն էլ «Աշխարհացույցի» հեղինակությունը եթե Շիրակացուն չի վերագրում, Խորենացուն էլ չի վերագրում. ապացույց՝ այն, որ «Մատենագիտության» մեջ ամեն առիթով կրկնվում է. «Մովսես Խորենացուն կամ Անանիա Շիրակացուն վերագրվող Աշխարհացույց», «Խորենացուն վերագրված Աշխարհացույց», «Խորենացու անունով հայտնի Աշխարհացույց» և այլն:

Մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ՝ «Հայկական մատենագիտության» մեջ «Աշխարհացույցը» զետեղել ո՛չ Խորենացուն և ո՛չ էլ Շիրակացուն հատկացված բաժիններում, այլ այնտեղ, որտեղ հեղինակը ի մի է բերել (էջ 1002—1024) անանուն աշխարհագրական երկերը, իսկ Խորենացուն և Շիրակացուն հատկացված հոդվածներում «Աշխարհացույցի» կապակցությամբ պետք էր հղումներ կատարել դեպի աշխարհագրական անանուն երկերի բաժինը:

Նշենք մատենագիտական բնույթի երկու նորություն, որոնք տեղի են ունեցել «Հայկական մատենագիտության» տպագրության հանձնվելուց (1956 թ.) հետո և որոնք այժմ անհրաժեշտություն են ստեղծում ճշտելու «Մատենագիտության» մեջ նշված երկու համապատասխան տրված յանո:

Հայտնի է, թե ինչ նշանակություն ունեն մատենագիտության համար հայ մատենագրության հին, և մանավանդ՝ հազվագեղ, հուշարձանների պահպանման վայրի մասին տեղեկությունները: «Հայկական մատենագիտության» մեջ հայտնվում է, որ հայկական առաջին պարբերական «Ազգաբարի» (որի ընդամենը մեկ օրինակը կար Հայաստանում և մեկն էլ ստացվել էր վերջերս Հնդկաստանից), «երկու լրիվ կոմպլեկտներ ունի Երևանի Պետ. Մատենադարանը (Մամուլի բաժին, նախատվետական ամսագրեր N 195 և N 3270)»: Այս տեղեկությունն այժմ իրականությանը չի համապատասխանում, որովհետև «Ազգաբարի»-ի հավաքածուներից մեկը տեղափոխված է Հանրային գրադարան, Մեզ թվում է, որ այսուհետև պետք է խուսափել թանգարանային հազվագեղության արժեք ստացած մատենագիտական հուշարձանների նմանօրինակ տեղափոխություններից, որոնք կարող են ապակուլմանորոշել նրանց մասին գոյություն ունեցող տեղեկություններից օգտվող մասնագետներին:

«Հայկական մատենագիտության» էջ 113-ում Արրահամ և Խորեն Խոստովանողների մասին

¹¹ Ա. Գ. Արրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1943:

կարողում ենք. «Նդիշեն գրեյ է նրանց ընդարձակ վկայարանությունը, որը նրա (Նդիշեի — Բ. Ա.) Վարդանանց պատմության Բ եղանակի բաղկացուցիչ մասերից մեկն է կազմում»։ Այս առթիվ ասենք հետևյալը. Նդիշեի պատմության՝ մոտ 40-ի հասնող տպագրություններում (թարգմանությունների հետ միասին) Արրահամ և Խորեն Խոստովանողների մասին խոսվում է, իրոք, Անասյանի նշած Բ եղանակում։ Սակայն 1557 թ. լույս տեսավ Նդիշեի պատմության գիտական համահավաք բնագիրը, որտեղ Ն. Տեր-Մինասյանը, հենվելով Մատենադարանի № 1888 (ընդօրինակված 1207 թ.) ձեռագրի վրա, ճշտեց «Վարդանանց պատմության ներածականում խոստացվող յոթ եղանակների և ձեռագրերում ու տպագրություններում ընդհանրություն գտած ութ եղանակների միջև երկար ժամանակ գոյություն ունեցող թյուրիմացությունը և այսպիսով, բնագիրը հարմարեցրեց Նդիշեի բնօրինակում խոստացված յոթ եղանակների հետ։ Այնպես, որ համաձայն այս հրատարակության՝ Արրահամ և Խորեն Խոստովանողների վկայարանությունը կազմում է Վարդանանց պատմության ոչ թե Բ, այլ՝ է եղանակի բաղկացուցիչ մասերից մեկը և պետք է այնտեղ փնտրել Ն դարի մատենագիր Արրահամ Խոստովանողին վերաբերող տեղեկությունները։

Ամփոփելով մեր խոսքը «Հայկական մատե-

նագիտության» հիմնագիր՝ հատորի մասին՝ ասենք, որ այս աշխատությունը մատենագիտության խոշորագույն նվաճումն է։ Հանձին «Հայկական մատենագիտության» մասնագետները գործ ունեն մի համապարփակ մատենագիտական հանրագիտարանի հետ, որտեղ իրենց հետաքրքրող նյութեր կարող են գտնել ոչ միայն բանասերը, պատմաբանը, գրականագետը, արվեստագետը, փիլիսոփան, այլև՝ ճշգրիտ գիտությունների պատմությամբ պրազվող գիտնականները՝ մաթեմատիկոսներ, քիմիկոսներ, բրժիշկներ և այլն, ինչպես նաև՝ կովկասագիտության, արեւելագիտության և ընդհանուր պատմաբանասիրական հարցերով զբաղվող մատնագետները։

«Հայկական մատենագիտության» ջանասեր հեղինակը միայնակ, երկար տարիների իր քրտնաքան աշխատանքով փաստորեն փոխարինել է այն ծանր աշխատանքներին, որ պետք է գործադրեին գիտնականները՝ հայ մատենագրության և Հայագիտական գրականության թաղմահարուստ անդաստանում իրենց հետաքրքրող նյութերը որոնելիս։

Այս աշխատանքն իր բարձր գիտականությամբ և կատարողական լազառիկ բարեխղճությամբ կարող է գիտական աշխատանքի լավագույն օրինակ հանդիսանալ։

ԳԵՎՈՐԳ ԱՐԿԱՐՅԱՆ